ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՄ-5/010

ք. Երևան 22 Ապրիլ 2020թ.

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ ընկերությունը (այսուհետ՝ **Կատարող**), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, մի կողմից Վանաձորի Գրիբոյեդովի անվան հ.11 ավագ դպրոց ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ **Պատվիրատու**), ի դեմս դպրոցի տնօրեն Ն,Սահակյանի, մյուս կողմից, (Կատարողը և Պատվիրատուն միասին այսուհետ՝ **Կողմեր**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1. <<Աշխատանքային օրենսդրության փոփոխություններ>> թեմայով մեկօրյա հեռավար դասընթաց:

1.2. Ծրագրի ժամկետը սահմանվում է 2 օր:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Պահանջել Կատարողից մասնագիտական ուսուցումն իրականացնել պատշաճ որակով և սույն պայմանագրի 1.2 կետում սահմանված տևողությամբ:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Ապահովել 1.1 ենթածրագրում իր աշխատակազմի մեկ ունկնդրի մասնակցությունը,

2.2.2. Մինչև Ծրագիրը սկսելը Կատարողի բանկային հաշվին փոխանցել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.1. Մասնագիտական ուսուցման ծրագրի մշակումը և մատուցման ձևի ընտրությունն իրականացնել իր հայեցողությամբ.

2.3.2. Մինչև Ծրագիրն սկսելը Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Ծրագիրն սկսել ֆինանսական միջոցներն ստանալուց 5 օրվա ընթացքում.

2.4.2. Ծրագիրն իրականացնել բարձր որակով և պատշաճ մակարդակով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունը, որը մատուցվում է սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված անձանց համար սահմանվում է 18 000 ՀՀ դրամ:

4. Վեճերի լուծման կարգը

4.1. Սույն պայմանագրի կատարման շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի կողմից.

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու հայերեն օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ.

5.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 23.04.2020թ. ներառյալ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային ռեկվիզիտները

Կատարող	Պատվիրատու
«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	«Վանաձորի Գրիբոյեդովի անվան հ.11 ավագ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Սարմենի 1, 2/1տարածք ՀՎՀՀ 01571846 Հ/Հ 163008180909 Բանկ՝«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ազատամարտիկների 1 ՀՎՀՀ՝ 06909818 ՀՀ Ֆ/Ն գանձապետական վարչություն Հ/Հ՝ 900238000534
Տնօրեն՝ SARGSYAN ARTUR 3206600014 Digitally signed by SARGSYAN ARTUR 3206600014 DN: c=AM, st=, l=, givenName=, serialNumber=, cn=SARGSYAN ARTUR 3206600014 Date: 2020.04.23 14:36:38 +04'00' ----------Ա. Սարգսյան	Տնօրեն՝ -------Digitally signed by SAHAKYAN NARINE 7810620045----------Ն. Սահակյան